Արձանագրություն N 2

Ազգային ժողովի աշխատակազմի կողմից, փորձաքննության (վերելակներ, կաթսաներ) ծառայությունների ձեռքբերման նպատակով, կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-24/5 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

03.01. 2024թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Լևոնյան, Մ. Սամսոնյան*, Վ. Մացակյան*, Տ. Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ներսիսյան*

*Նիստին բացակայում էին հանձնաժողովի անդամներ՝ Մ. Սամսոնյանը, Վ. Մացակյանը և հանձնաժողովի քարտուղար Ա. Ներսիսյանը

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)
1	փորձաքննության ծառայություններ	100000
2	փորձաքննության ծառայություններ	180000

2. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2024 թվականի հունվարի 3-ին ժամը 10:00-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Գործունեության հասցեն	Կապի միջոցներ	Էլ. հասցե
1	«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Ազատության 24	/+374/95333938	texno.armenia @gmail.com

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԳՀԾՁԲ-24/5 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ՝ Ընթացակարգ/ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով /այսուհետ՝ Օրենք/ նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերում կատարված փոփոխության մասին

Հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Մասնակիցներ	Առաջարկած գինը /ՀՀ դրամ/		
		Գնի առաջարկն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ	80000	16000	96000
2		150000	30000	180000

7. Նիստը կասեցնելու վերաբերյալ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի համակարգողը գտնվում էր արձակուրդում, անհրաժեշտություն առաջացավ 28.11.23թ. թիվ 1405 հրամանում կատարելու փոփոխություն, ինչով պայմանավորված նիստը կասեցվեց մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

8. Տվյալներ՝ էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը վերսկսելու վերաբերյալ

2024 թվականի հունվարի 17-ին ժամը 12:00-ին կայացած նիստում ներկա էին գնահատող հանձնաժողովի բոլոր անդամները:

Ուսումնասիրելով «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊ ընկերության կողմից ներկայացրած հայտը, գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Գնահատող հանձնաժողովը որոշեց «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊ ընկերության հայտը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

17.01.2023թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից՝ «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊ ընկերությանը հայտարարել ընտրված մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժնով:

9.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

9.3 Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

9.4 Գնումների մասին օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Վ. Թորոսյան

անդամներ՝ _____ Լ. Լևոնյան

_____ Մ. Սամսոնյան

_____ Վ. Մացակյան

_____ Տ. Բաղայյան

Քարտուղար՝ _____ Ռ. Հովհաննիսյան